ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ

Հավելված

ՀՀ ոստիկանության պետի

2011 թվականի հոկտեմբերի 11-ի

թիվ 2760 -Ա հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոստիկանության առջև դրված խնդիրների իրականացումը, ծառայության ընթացքում առաջացող իրավիճակների փոփոխական բնույթը և առկա մարտահրավերները հաճախ պայմանավորում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքերում ուժային միջոցների, իսկ բացառիկ իրադրություններում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտությունը: Այս իմաստով՝ խիստ կարևոր է ոստիկանության և իրավասու մյուս պետական մարմինների կողմից բոլոր հնարավոր քայլերի ձեռնարկումը՝ ուղղված հիշ-

յալ ուժային միջոցների գործադրման իրավաչափության ապահովմանը: Ուժային միջոցների ոչ իրավաչափ գործադրումը տեղում կարող է հանգեցնել որոշակի բացասական հետևանքների՝ բարդացնել միջադեպը, որն իր հերթին ենթադրում է ոստիկանական ավելի ծավալուն միջամտություն (ուժային միջոցների կիրառում), ինչը կարող է հետագայում նպաստել ոստիկանության նկատմամբ վստահության կորստին և խաթարել բնակչությանը արդյունավետ ծառայություններ մատուցելու գործընթացը:

2. Ակնհայտ է, որ ոստիկանության նկատմամբ քաղաքացիների ունեցած վստահության աստիճանը ուղղակիորեն կախված է առաջիններիս ցուցաբերած վերաբերմունքից և վարքագծից (գործողությունների օրինականությունից), իսկ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը հայտնի իմաստով «վտանգում է» այդ հարաբերությունները, ուստի գործադրման յուրաքանչյուր դեպք պետք է լինի իրավաչափ և խիստ հիմնավոր:

3. Սույն ուղեցույցի շրջանակներում շեշտադրումն արվում է զանգվածային անկարգությունների դեպքերում գործադրվող ուժային միջամտության առանձնահատկությունների վրա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նման իրավիճակներում մեծ է և ուժային միջոցների գործադրման հավանականությունը և այն անձանց թիվն, ում նկատմամբ դրանք կարող են գործադրվել, ինչն էլ իր հերթին առաջացնում է հանրային (միջազգային) լայն արձագանք:

II. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Ուղեցույցի նպատակն է ՀՀ օրենսդրությանը, միջազգային համաձայնագրերին և իրավապահ գործունեության արդի սկզբունքներին համապատասխան պարզաբանել ուժային միջոցների գործադրման հետ կապված հիմնախնդիրները, մասնավորապես՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գոր-

ծադրման հիմքերը, պայմանները և սահմանները («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի IV գլուխ):

5. Ուղեցույցի շրջանակներում հատուկ միջոցների տեխնիկական բնութագրերը և դրանց գործադրման առանձնահատկությունները ներառված չեն: Վերջիններս սահմանված են առանձին ուսումնական և տակտիկա-տեխնիկական ձեռնարկներով, չնայած որոշ ընդհանուր սկզբունքներ և գործնական նկատառումներ այնուամենայնիվ ուղեցույցում շոշափվում են:

6. Ուղեցույցի երեք հիմնական բաղադրիչների՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման դեպքերը (հիմքերը և պայմանները) անբաժանելիորեն փոխկապակցված են: Դրանք հարկավոր է դիտարկել իբրև «ուժային սանդղակի» սահմաններում առկա այլընտրանքներ՝ առանց որևէ ուժային միջամտության իրականացվող գործողություններից մինչև մահացու ուժով օժտված հրազենի գործադրում, մասնավորապես՝ խաղաղ հավաք կազմակերպող ամբոխի գործողությունները վերահսկելու համար որևէ ուժային միջամտություն հարկավոր չէ. բավարարար է սոսկ ոստիկանական ներկայությունը: Այս դեպքում կարևորվում է ոստիկանության ծառայության ոճը, այդ թվում՝ ծառայողների թվաքանակը, արտաքին տեսքը, համազգեստի տեսակը, շփումները մասնակիցների հետ, վահանների առկայությունը և այլն: Հատուկ միջոցների գործադրման անհրաժեշտությունը կարող է ծագել, երբ ամբոխի վարքագիծը դուրս է գալիս հսկողությունից, ինչպես նաև՝ զինված մասնակիցներով միջադեպերի ժամանակ, երբ վտանգավոր իրավիճակը այնուամենայնիվ հնարավոր է շտկել առանց հրազենի գործադրման (նվազ մահաբեր կամ հատուկ միջոցների դիֆերենցված գործադրմամբ, օրինակ՝ էլեկտրահարող սարքերի կամ կայծային պարպիչների օգնությամբ): Հրազենը կարող է գործադրվել (կիրառվել) միայն որոշ բացառիկ դեպքերում («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված):

III. ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

7. Ոստիկանության ծառայողների (ընդհանրապես՝ իրավապահ մարմինների աշխատակիցների) կողմից ուժի կիրառմանն առնչվող հարցերն ամրագրում են ստացել միջազգային իրավական ակտերում (համաձայնագրերում) և դրանցից բխող այլ փաստաթղթերում: Վերջիններս չունեն համապարտադիր ուժ, սակայն պարունակում են ուժի գործադրման ոլորտում տարբեր պետությունների ոստիկանական ծառայությունների համար խորհրդատվելի (ակնկալվող) գործելակերպի որոշակի մոդելներ: Հիշյալ պահանջները և սկզբունքները արտացոլվում են ազգային օրենսդրությունում՝ համապատասխան իրավական ակտերով ապահովելով ոստիկանության գործողությունների իրավաչափությունը, հետևաբար և՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունները պաշտպանությունը:

8. ՀՀ-ն՝ որպես ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի անդամ վավերացրել է 1948թ.-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» և 1950թ.-ի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան»: Ստորագրվել են նաև ոստիկանության կողմից ուժի և հրազենի գործադրմանը վերաբերող և լայնորեն ճանաչված հետևյալ երեք փաստաթղթերը.

ա) ՄԱԿ-ի՝ Իրավապահ պաշտոնյաների վարքագծի կանոնները - 1979թ.

բ) ՄԱԿ-ի՝ Իրավապահ պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքները - 1990թ.

գ) Ոստիկանության էթիկայի մասին եվրոպական կանոնակարգը - 2001թ.

9. ՀՀ ազգային օրենսդրության շրջանակներում ոլորտը կարգավորում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի IV գլուխը՝ 29-34-րդ հոդվածներ, որոնք սահմանում են ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հիմքերը, պայմանները և սահմանները: Բնագավառի հարաբերությունները կարգավորող

իրավական ակտերն են նաև ՀՀ կառավարության 11.01.2007թ. «ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկապահակետային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 151-Ն որոշումը և ՀՀ ոստիկանության պետի 30.05.2011թ. «ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգի մասին» թիվ 1-Ն հրամանը (այսուհետ՝ «ՀՀ ոստիկանության պետի հրաման»):

IV. ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Ուղեցույցում օգտագործվող հասկացություններն են.

Օրինականություն - յուրաքանչյուր գործողություն, որը սահմանված է օրենքով և հետապնդում է օրինական նպատակ, մասնավորապես՝ ոստիկանության ծառայողների կողմից օրենքով սահմանված իրենց լիազորությունների իրականացումը և վերջիններիս գործունեությունում կամայականության բացակայությունը.

Համաչափություն - գործադրվող ուժային միջամտության հնարավորինս համապատասխանությունը ստեղծված իրադրությանը և առկա վտանգին.

Իրավաչափություն (օրինաչափություն) – ոստիկանության գործողությունների հստակ համապատասխանությունը իրավական ակտերի (օրենքների) պահանջներին.

Զանգվածային անկարգություն - բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշ-

խանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված մեկից ավելի անձանց գործողությունները, որոնց հետևանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը.

Ուժի գործադրում – ոստիկանության գործունեության ընթացքում ոստիկանական միջամտության տարատեսակություն՝ ուղղված օրենքով ոստիկանության առջև դրված խնդիրների իրականացմանը.

Ուժի գործադրման սանդղակ - որոշակի իրավիճակում ոստիկանական միջամտության (արձագանքի) աստիճանը ներկայացնող սանդղակ, որի սկսվում է բանավոր հաղորդակցությունից և ավարտվում հրազենի գործադրմամբ (օգտագործմամբ):

V. ՈՒԺԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

11. Ուժի գործադրման իրավաչափության պահպանումը ոստիկանության գործելակերպի գերակա ուղղություն է, որը բխում է ոստիկանության կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման (օգտագործման) հիմքերն ու պայմանները ամրագրող համապատասխան իրավական ակտերից:

12. «Ուժի գործադրում» հասկացությունը փոխկապված է «ուժի գործադրման սանդղակ» հասկացության հետ: Ուժ գործադրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ երկու սկզբունքները՝

ա) ուժի գործադրման իրավական հիմքը - «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի IV գլխի 29-34-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի և պայմանների առկայությունը.

բ) գործադրվող ուժի համաչափությունը – ոստիկանության կողմից ուժային միջամտությունը (արձագանքը) պետք է առավելագույնս ադեկվատ (համապատասխան) լինի ստեղծված իրադ-

ությանը և առկա վտանգին՝ ապահովելով հասցվող վնասի նվազագույն աստիճան.

13. Հիշյալ սկզբունքները անվերապահորեն պետք է պահպանվեն և՛ ոստիկանության ամենօրյա գործունեության ընթացքում՝ հանցագործությունները և վարչական իրավախախտումները նախականխելիս, կանխելիս և խափանելիս, և՛ զանգվածային անկարգությունների կամ առավել բարդ օպերատիվ առաջադրանքներ կատարելու ժամանակ:

14. Ուժի գործադրման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ոստիկանության ծառայողները պարտավոր են հաշվի առնել իրավիճակի առանձնահատկությունները և դեպքերի զարգացման հնարավոր ընթացքը, մասնավորապես՝ միայն իրավախախտման (հանցագործության)՝ որպես երևույթի, առկայության փաստը ինքնին չի կարող կանխորոշել ոստիկանության կողմից ուժի գործադրման աստիճանը: Մի շարք այլ գործոններ նույնպես կարող են իրենց համակցության մեջ էապես ազդել այս գործընթացի վրա, օրինակ՝ իրավախախտ անձի վարքագիծը (հնարավոր դիմադրությունը կամ անհնազանդության աստիճանը), ֆիզիկական ուժը, տարիքը, սեռը, նրան անմիջապես վնասազերծելու (ձերբակալելու) անհրաժեշտությունը, արարքի հետևանքով մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի կամ տուժած անձանց (վիրավորների) առկայությունը, ինչպես նաև՝ ոստիկանության ծառայողների թվաքանակը, ֆիզիկական ուժը, տեխնիկական հնարավորությունները և այլն: Այսպես, եթե իրավախախտը հարձակում է գործել այլ անձանց վրա, սակայն ոստիկանության կողմից վնասազերծվելուց հետո դիմադրություն չի ցուցաբերում, ենթարկվում է նրա օրինական պահանջներին, ապա ուժ գործադրելու որևէ հիմք չկա, բացի ձեռնաշղթաներ հագցնելուց՝ ապահովելու իրավախախտի հետագա գործողությունների վերահսկելիությունը և կանխելու փախուստի հնարավոր փորձը:

15. Մինչև ուժի գործադրումը (ցանկացած դրսևորմամբ) ոստիկանությունը պետք է հաշվի առնի նախազգուշական դիմումի

(հորդոր, կոչ) անհրաժեշտությունը, քանի որ դա կարող է թուլացնել իրադրության լարվածությունը, վերացնել ուժի գործադրման անհրաժեշտությունը կամ նվազեցնել դրա աստիճանը՝ ուժի գործադրման սանդղակի իմաստով («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մաս): Նման նախազգուշացումների կիրառման պրակտիկան կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ նաև ոստիկանության հեղինակության (իմիջի) բարելավման և հասարակական վստահության բարձրացման վրա (օրինակ՝ լրագրողական արձագանքման միջոցով):

16. Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝ «իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը»: Հիշյալ դրույթի տրամաբանությունից բխում է, որ բոլոր դեպքերում ոստիկանության ծառայողները, հետևելով իրավաչափության սկզբունքին, ուժ գործադրելիս պետք է նախընտրեն ակտիվ պաշտպանության այնպիսի հատուկ միջոցներ (ՀՀ ոստիկանության պետի հրամանով նախատեսված), որոնց օգտագործման ուղղությամբ նրանք անցել են համապատասխան ուսուցում: Բացառիկ հանգամանքներում, երբ ոստիկանության ծառայողը զրկվել է նման հնարավորությունից, պարտադրված իրավիճակի կտրուկ վատթարացմամբ, ապա կարող է օգտագործվել ցանկացած այլ առարկա (միջոց)՝ պայմանով, որ պահպանվի համաչափության սկզբունքը: Միաժամանակ, ոստիկանության բոլոր ծառայողները պարտավոր են կրել (ունենալ) իրենց ծառայության բնույթով պայմանա-

վորված ակտիվ պաշտպանության հատուկ միջոցներ (օրինակ՝ ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ):

VI. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ

17. ՀՀ ոստիկանության պետի հրամանի համաձայն՝ հատուկ միջոցները դասակարգվում են.

1) ակտիվ պաշտպանության միջոցների.

ա) ձեռնաշղթաներ.

բ) ռետինե մահակ.

գ) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ.

դ) գազային և վնասվածքային ազդեցության ատրճանակներ և համապատասխան փամփուշտներ:

2) հատուկ միջոցառումների իրականացման միջոցների.

ա) բարձր ճնշման փոշեցրիչներ և փաթեթներ.

բ) ձեռքի գազային նռնակներ, ծխագլանակներ.

գ) լուսաձայնային նռնակներ և սարքավորումներ.

դ) օդակաթիլային փոշեցրիչ (արցունքաբեր և գրգռիչ բաղադրությամբ փաթեթներ).

ե) գազային նռնակներով և ռետինե գնդակներով փամփուշտներ.

զ) արգելանքներ քանդելու միջոցներ.

է) հատուկ ներկող նյութեր.

ը) ծառայողական շներ.

թ) ջրանետ մեքենաներ.

ժ) զրահամեքենաներ.

ի) տրանսպորտի և մարդկանց հարկադիր կանգնեցման (արգելափակման) միջոցներ:

18. ՀՀ ոստիկանության պետի հրամանի 4-րդ գլուխը սահմանում է ոստիկանության ծառայողներին հատուկ միջոցներ տրամադրելու թույլտվության կարգը, մասնավորապես.

ա) *ակտիվ պաշտպանության միջոցներ տրամադրելու թույլտվությունը* տալիս են ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանման պետերը: Գործադրվող ակտիվ պաշտպանության միջոցների վնասը նվազագույնի հասցնելու նպատակով՝ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման պետը պետք է ապահովի հատուկ միջոցների դիֆերենցված (տարբերակված) տեսականու հասանելիությունը՝ ըստ տրված առաջադրանքի կատարման բնույթի, օրինակ՝ համազգեստով ծառայություն իրականացնող (հետիոտն կամ պարեկային ավտոմեքենայով) ոստիկանության ծառայողները շրջայցի ընթացքում կարող են հանդիպել իրավախախտ անձանց: Ոստիկանության ծառայողները իրենց հետ պետք է ունենան տարբեր ակտիվ պաշտպանության հատուկ միջոցներ, որպեսզի ըստ նպատակահարմարության գործադրեն իրադրությանը (իրավախախտ անձանց վարքագծին) առավել համապատասխան միջոցը (ռետինե մահակ, կայծային պարպիչներ, ձեռնաշղթա և այլն):

բ) *հատուկ միջոցառումների իրականացման միջոցներ տրամադրելու թույլտվությունը* տալիս են ՀՀ ոստիկանության պետը կամ նրա առաջին տեղակալը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի հրամանով լիազորված անձինք: Հատուկ միջոցառումների իրականացման միջոցները ակտիվ պաշտպանության հատուկ միջոցներից առանձնանում են նախ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերով, ազդեցության գոտու անհամեմատ մեծ շառավղով և նրանով, որ գործադրվում են մեծ թվով անձանց (բազմության) նկատմամբ: Այս իմաստով՝ դրանց գործադրման փաստի հասարակական արձագանքները ավելի մեծ են և ընդհանուր առմամբ ազդում են «ոստիկանության կերպարի» վրա:

19. Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների գործադրման թույլատրելի չափանիշները սահմանում է ՀՀ առողջապահության նախարարը՝ ոստիկանության ներկայացրած հատուկ միջոցների տեխնիկական կանոնակարգերի հիման վրա: Տվյալ հատուկ միջոցի գործադրման թույլտվությունը տրամադր-

վում է, եթե այն ունի մարդու առողջության համար ժամանակավոր (անցողիկ), ոչ մահաբեր ազդեցություն և օրգանիզմում չի առաջացնում անդառնալի փոփոխություններ:

20. Հատուկ միջոցների գործադրման հիմքերը և պայմանները, դրանց գործադրման սահմանափակումները, ոստիկանության ծառայողներին հատկացման կարգը (այդ փաստի ամրագրման կարգը), գործադրման առանձնահատկությունները, դրանց հետ վարվելու անվտանգության պահանջները, պահպանումը և պիտանելիության պարբերաբար ստուգումը մանրամասն սահմանված է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:

VII. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

21.Հատուկ միջոցների որոշ տեսակներ (հատկապես՝ հատուկ միջոցառումների իրականացման միջոցները), պայմանավորված իրենց բնույթով (մարտավարատեխնիկական բնութագրով), գործադրման իմաստով ունեն ավելի նպատակաուղղված ազդեցություն, քան մյուսները, օրինակ՝ ռետինե գնդակներով փամփուշտներով կարող են վնասազերծվել առանձին իրավախախտներ, քանի որ սպառազինության այդ տեսակը թույլ է տալիս խոցել նպատակաուղղված ձևով, իսկ որոշ հատուկ միջոցների գործադրումից առաջացող գազաձխային ամպի, լուսաձայնային էֆեկտի (աղմուկի) և արցունքաբեր գազի ազդեցությունը տարածվում է ողջ բազմության վրա, հաճախ նաև՝ մերձակայքում գտնվող և իրավախախտման (զանգվածային անկարգության) հետ առնչություն չունեցող մարդկանց վրա:

22. Յուրաքանչյուր հատուկ միջոցի գործադրման կամ տակտիկական հնարքի կիրառման ժամանակ ոստիկանության գործողությունները պետք է լինեն հնարավորինս նպատա-

կառուղղված՝ պահպանելով իրավաչափության և համաչափության սկզբունքների պահանջները , իսկ վտանգավոր իրավիճակներում, որոնք սպառնում են մարդկանց կյանքին ու առողջությանը, նախքան ոչ նպատակաուղղված հատուկ միջոցների գործադրմանն անցնելը, պետք է գործադրվեն վերը հիշատակված ռետինե գնդակներով փամփուշտներ (բացառությամբ այն դեպքերի, երբ ամբոխի ագրեսիվության աստիճանն այնքան բարձր է, որ հնարավոր չէ առանձնացնել կոնկրետ իրավախախտների գործողությունները):

23. Զանգվածային անկարգությունների ժամանակ ոստիկանության բոլոր ծառայողներից պահանջվում է առավելագույն զսպվածություն, քանի որ մեկ ոստիկանության ծառայողի, դասակի կամ ստորաբաժանման անհամաչափ գործողությունները կարող են կտրուկ սրել իրավիճակը և հանգեցնել միջադեպի անսպասելի բարդացմանը: Այս իմաստով՝ նման իրադրություններում ոստիկանության յուրաքանչյուր ծառայող պետք է ձեռնպահ մնա անհատական գործողություններից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ինքնապաշտպանության համար:

24. Եթե ամբոխը չունի ելքի ճանապարհ (հատկապես՝ երբ ամբոխը փակված կամ շրջապատված է), ապա չպետք է գործադրվեն այնպիսի հատուկ միջոցներ, որոնց ազդեցությունը կարող է խուճապ կամ ամբոխի հանկարծակի տեղաշարժ առաջացնել. օրինակ՝ ոստիկանությունը ամբոխը ցրելու կամ մասնատելու նպատակով գործադրում է արցունքաբեր գազով փամփուշտներ, ընդ որում՝ ամբոխը շրջապատված է ոստիկաններով, փշալարերով և այլ արգելապատնեշներով կամ անձանց տեղաշարժը սահմանափակված է փողոցի լայնությամբ: Արցունքաբեր գազի ազդեցությամբ՝ ամբոխը կտեղաշարժվի դեպի առավել ազատ տարածք (կամ դեպի ոստիկանության ծառայողները), ինչը կմեկնաբանվի որպես հերթական ագրեսիվ գործողություն՝ հանգեցնելով գործադրվող ուժի սաստկացմանը: Սրանից պարզ է դառնում, թե ոստիկանության ոչ հեռատես գործողություններն

ինչպես կարող են բարդացնել իրավիճակը: Այդ նկատառումից ելնելով՝ նախքան որևէ տակտիկական հնարք կիրառելը կամ հատուկ միջոց գործադրելը պետք է օբյեկտիվ կերպով գնահատվեն ոչ միայն ոստիկանության մտադրությունները, այլ նաև՝ ամբոխի հավանական գործողությունները (վարքագիծը):

25. Զանգվածային անկարգությունների ժամանակ, պայմանավորված այն հանգամանքով, որ մասնակիցների քանակը կտրուկ ավելանալու հակում ունի, ինչը կարող է նպաստել անկարգությունների ծավալմանը, ոստիկանությունը վերջինս կանխելու նպատակով ուղեփակում կամ շրջապատում է ամբոխը, որի արդյունքում խափանվում (արգելափակվում) է մարդկանց տեղաշարժը (ելքը): Ամբոխի շրջապատումը ենթադրում է ոստիկանության ծառայողների թվի ավելացում, ինչը հավանական է դարձնում ամբոխի առանձին ներկայացուցիչների կողմից իրավախախտումները (ագրեսիվ վարքագիծը), և որի արդյունքում ոստիկանությունը անցնում է ավելի կոշտ միջամտության: Շրջապատման տակտիկական հնարքը կիրառելիս հարկավոր է ունենալ լրացուցիչ գործողությունների պլան, օրինակ՝ ինչպե՞ս իրավախախտներին ու սադրիչներին տարբերակել կողմնակի անձանցից, ինչպե՞ս մեկուսացնել նրանց ամբոխից, ամբոխի կազմում պատահական հայտնված անձանց ելքի ուղիները, վիրավորների և տուժածների բուժօգնության կազմակերպումը և այլն:

26. Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Ոստիկանության ծառայողների կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ հատուկ միջոցներ գործադրելու մտադրության մասին նախազգուշացումներ անելու առաջարկելի ձևակերպումները հետևյալն են.

ա)«Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը)»:

բ) «Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը): Այլևս նախազգուշացում չի լինելու:»

27. Ոստիկանության կողմից արվող նախազգուշացումները պետք է լինեն ամբոխին հասկանալի արտահայտություններով և առավել նպատակահարմար ձևով, օրինակ՝ բարձրախոսի, բարձրաձայնման համակարգի, ցուցանակի, պաստառի, էլեկտրոնային էկրանի և այլնի միջոցով: Հնարավորության դեպքում ամբոխին ուղղված առանձին նախազգուշացումների միջև պետք է տրվի ողջամիտ ժամանակահատված, որպեսզի ամբոխը ցուցաբերի համապատասխան արձագանք: Անհրաժեշտ է նաև էլեկտրոնային կրիչի վրա տեսաձայնագրել արված նախազգուշացումները և անհատների կամ ամբոխի կողմից հնչած պատասխանները («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

VIII. ՀՐԱԶԵՆԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

28. Ոստիկանության ծառայողի կողմից, որպես ծայրահեղ միջոց, հրազենի գործադրումը էապես ազդում է ոստիկանության վարկանիշի և հասարակական (այդ թվում՝ միջազգային հանրության կողմից) վստահության ձևավորման վրա: Հրազենի գործադրման իրավական հիմքը կազմում են միջազգային համաձայ-

նագրերը, կանոնակարգերը, մի շարք հիմնարար սկզբունքներ (ինչպես օր.՝ «Իրավապահ մարմինների ծառայողների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները») և ազգային օրենսդրությունը: Այսպես՝ համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, ոստիկանության ծառայողներն անձամբ կամ ստորաբաժանման կազմում իրավունք ունեն հրազեն գործադրել հետևյալ դեպքերում՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պատանդներին, ինչպես նաև զավթված պետական պահպանության ենթակա օբյեկտները ազատելիս.

4) կյանքի, առողջության, սեփականության դեմ ծանր կամ առանձնապես ծանր
հանցագործություն կատարելու պահին բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

5) քաղաքացիների բնակարանների, պետական մարմինների, կազմակերպությունների զբաղեցրած տարածքների, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև ուղեկցող ստորաբաժանումների վրա խմբակային կամ զինված հարձակումը հետ մղելիս.

6) կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողներին իրավունք ունեն հրազեն օգտագործել՝

1) տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդը իրական վտանգ է ստեղծում քաղաքացիների կյանքի ու առողջության համար և չի ենթարկվում ոստիկանության ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին.

2) մարդկանց կյանքին և առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

3) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է հրազենի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

29. «Իրավապահ մարմինների ծառայողների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքների», 9-րդ մասը սահմանում է, որ հրազենը կարող է գործադրվել միայն՝

ա) ինքնապաշտպանության և այլ անձանց պաշտպանության նպատակով՝ կյանքին ու առողջությանն անմիջական սպառնալիք ներկայացնող վտանգի դեպքում.

բ) կյանքին լրջորեն սպառնացող ծանր հանցագործության կատարումը կանխելու նպատակով.

գ) նման վտանգ ներկայացնող և իրավապահ մարմինների օրինական պահանջներին չենթարկվող անձին ձերբակալելու նպատակով.

դ) փախուստ կատարելու փորձը կանխելու նպատակով:

Նշում. «գ» և «դ» ենթակետերը վերաբերում են միայն «ա» և «բ» ենթակետերում պարունակվող գործողություններին:

30. Ոստիկանության ծառայողների գործողություններում հրազենի գործադրումը վերջին ծայրահեղ միջոցն է, որի պարտադրանքը երևան է գալիս, երբ մնացած հատուկ միջոցները հնարավորինս գործադրվել են (կամ այդպիսի գործադրումը ձախողվել է, կամ խիստ հավանական է՝ կձախողվեր), սակայն անարդյունավետ: «Իրավապահ մարմինների ծառայողների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները» սահմանում են, որ պետությունը իրավապահ մարմինների զինանոցը պետք է համալրի հատուկ միջոցների բավականաչափ լայն տեսականիով, որպեսզի հրազենի գործադրման դեպքերը հասցվեն նվազագույնի:

31. Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի՝ Ոստիկանության զինված ծառայողն իրավունք ունի մերկացնել և մարտական վիճակի բերել հրազենը, եթե գտնում է, որ ստեղծված իրադրությունում կարող է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածին համապատասխան հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջանալ: Մերկացրած հրազենով ձերբակալում կատարող ոստիկանության ծառայողին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձերբակալվողի ցանկացած փորձ ոստիկանության ծառայողն իրավունք է տալիս առանց նախազգուշացման հրազեն գործադրել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան:

Օրինակ. Անձը հրազենը ձեռքին շարժվում է դեպի ոստիկանության ծառայողը: Վերջինս փորձ է ձեռնարկում հաղորդակցվելու՝ բարձրաձայն զգուշացնելով վայր դնել զենքը և կանգնել: Եթե անձը չափից շատ է մոտեցել ծառայողին, ապա վերջինս, համարելով, որ իր կյանքին ու առողջությանն անմիջական վտանգ է սպառնում, կարող է գործադրել հրազեն: Այդուհան-

դերձ, եթե ոստիկանության ծառայողն ունի հատուկ միջոցներ, որոնց գործադրումը կարող է արդյունավետ լինել, ապա, ուղղորդվելով ուժի գործադրման սանդղակով, պետք է գործադրի նվազ աստիճանի ազդեցության ուժ, թեև առկա է օրենքով սահմանված հրազեն գործադրելու հիմք:

Օրինակ. Եթե իրավախախտը բերման ենթարկելիս դիմադրություն է ցույց տալիս ոստիկանության ծառայողին, կամ նրա վրա հարձակվելու փորձ է անում, վերջինս կարող է գործադրել իրավաչափ ուժ՝ խափանելու իրավախախտի գործողությունները: Դիմադրության ագրեսիվությունից կախված՝ ոստիկանության ծառայողի կողմից ողջամիտ կլինի գործադրել ակտիվ պաշտպանության հատուկ միջոցներ, օրինակ՝ ռետինե մահակ կամ գազային փամփուշտով ատրճանակ: Հրազենի գործադրումն այս դեպքում արդարացված չէ, բացառությամբ, երբ ոստիկանության ծառայողը իրական հիմքեր ունի ենթադրելու, որ հարձակումը անմիջական սպառնալիք է ստեղծում իր կյանքի և առողջության համար (օրինակ՝ հրազենը ոստիկանության ծառայողից խլելու փորձ կատարելիս):

32. Հրազենի գործադրումը նախազգուշացման նպատակով (նախազգուշական կրակոց). - «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ.

Զենք օգտագործելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս ոստիկանության ծառայողի կողմից հրազենի գործադրումը ևս բավականաչափ լուրջ քայլ է և պետք է ձեռնարկվի իբրև հնարավոր միջոցներից վերջինը: Այն ոչ միայն վտանգավոր է միջադեպի հետ առնչություն չունեցող անձանց համար, այլ լրջորեն անդրադառնում է ոստիկանության և հասարակության (քաղաքացիների) միջև հարաբերությունների, վստահության մթնոլորտի վրա և կարող է թյուր կարծիք ստեղծել ոստիկանության՝ իբրև հրազեն գործադրելուն հակված ծառայության կերպարի վերաբերյալ: Թեև «նախազգուշական կրակոցը» կարող է այլընտրանքային տարբերակ լինել անձի նկատմամբ հրազենի գոր-

ծադրելու փոխարեն, այս դեպքում ևս պետք է պահպանվի համաչափության սկզբունքը:

Օրինակ. Իրավախախտը զինված է հրազենով և նրա վարքագիծն անձանց կյանքին և առողջությանը անմիջական սպառնում է, այսինքն առկա է հրազենի գործադրման հիմք: Նա դիմում է փախուստի, ընդ որում՝ վարքագիծը շարունակում է անձանց կյանքին և առողջությանը անմիջական վտանգ ներկայացնել: Այս դեպքում՝ նախազգուշական կրակոցը ունի ակնհայտ նվազ ազդեցություն (էֆեկտիվություն), քան հրազենի գործադրումը: Ոստիկանության ծառայողը, նախազգուշական կրակոցի հետ կապված ռիսկը գնահատելիս, պետք է հաշվի առնի ոչ միայն իրավախախտի վարքագիծը, այլև այն, թե որտեղ կհայտնվի արձակած գնդակը (օրինակ՝ բնակելի շենքերի, սրճարանների, մեքենաների մերձակայքում և այլն):

Օրինակ. Իրավախախտը փողոցում կնոջ վրա հարձակում գործելով, ոստիկանությանը տեսնելուն պես դիմում է փախուստի: Այս դեպքում նրա վարքագիծը անձանց կյանքին և առողջությանը անմիջական վտանգ չի ներկայացնում, և նախազգուշական կրակոցն արդարացված լինել չի կարող:

IX. ՀՐԱԶԵՆԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

33. Զանգվածային անկարգությունների ժամանակ հրազենի գործադրման բացառիկ դեպքերը պետք է հանգամանորեն ուսումնասիրվեն և գնահատվեն, քանի որ դա հանգեցնում է գործադրվող ուժի առավել բարձ աստիճանին՝ բնականաբար առաջացնելով հետմիջադեպային քննության անհրաժեշտություն: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը

արգելում է հրազենի գործադրումը մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ դրանից կարող են տուժել այլ անձինք:

34. Ոստիկանական ծառայության ընթացքում լինում են իրավիճակներ, երբ զանգվածային անկարգությունների ժամանակ առանձին իրավախախտների կամ դրանց խմբերի գործողությունները (վարքագիծը) իրական վտանգ են ներկայացնում անձանց կյանքին և առողջությանը, ընդ որում՝ այլ հանգամանքներում ոստիկանությունը դրան կարձագանքեր հրազենի գործադրմամբ: Մինչդեռ զանգվածային անկարգությունների արդյունքում ստեղծված իրավիճակը, մասնավորապես՝ մասնակիցների թվաքանակը և անկազմակերպ վարքագիծը անհնարին են դարձնում հրազենային գործադրման ընդունված տակտիկայի իրագործումը: Այս դեպքում, որպես կանոն, ոստիկանության տրամադրության տակ լինում են բարձր ուժային բնութագրերով հատուկ միջոցներ (զրահամեքենաներ, ջրանետ մեքենաներ և այլն), որոնք կարող են գործադրվել հրազենի փոխարեն:

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am